

Համայնքների ներգրավման, մարդու իրավունքների եվ գեներային հավասարության հարցերով համակարգող

**POSITION TITLE:** CRG Coordinator (TOR attached)

**DURATION:** 6 months

**LOCATION:** Yerevan, Armenia

**OPENING DATE:** 22 November, 2021

**APPLICATION DEADLINE:** 05 December, 2021

**STARTING DATE:** as soon as possible

**SALARY:** Competitive

**APPLICATION PROCEDURES:** Interested applicants should submit their CVs to: [secretariat.ccm@gmail.com](mailto:secretariat.ccm@gmail.com). Please indicate in the subject line of your e-mail the title of the position that you apply for. Only short-listed candidates will be invited for interviews.

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳԱՎՎՄԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ  
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

**I. Հիմնական դրույթներ**

Համայնքների ներգրավման, մարդու իրավունքների և գենդերային հավասարության հարցերով համակարգողը պետք է աշխատի Հայաստանում ՄԻԱՎ-ՁԻԱՀ, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) ենթակայության ներքո:

ՀԻԳ հարցերով համակարգողը պետք է սերտորեն համագործակցի ՀԻԳ ԱԽ-ի հետ: Նա հաշվետու է ՄՀՀ-ին:

**II. Ծրջանակ**

ՀԻԳ խորհրդատուն պետք է համակարգի ՀԻԳ ԱԽ-ի աշխատանքները՝ խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և տուբերկուլյոզով հիվանդների շրջանում մարդու իրավունքների ոտնահարման և խտրականության դեպքերի մշտադիտարկման հետ կապված և հիմք ընդունելով ԱԽ-ի քննարկումները՝ գեկուցի ՄՀՀ-ին Հայաստանում իրավիճակի վերաբերյալ և առաջարկի ձեռնարկվելիք միջոցառումներ:

**Նպատակ**

Նպատակ է Հայաստանում խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և տուբերկուլյոզով հիվանդների համար կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծառայությունների արդյունավետ համակարգի ներդրմանը:

ՀԻԳ համակարգողը, ՀԻԳ ԱԽ-ի հետ համատեղ, պետք է կիրառի հետևյալ սկզբունքները՝

- Հարգել մարդու իրավունքները
- Խտրականության բացակայություն
- Արժանապատվություն և հավասարություն
- Ապացույցների վրա հիմնված մոտեցում
- Համայնքահեն մոտեցում

ՀԻԳ համակարգողը՝ ՀԻԳ ԱԽ-ի հետ համագործակցությամբ, պետք է կազմի պարբերական հաշվետվություն, որը պետք է պարունակի մշտադիտարկման և գնահատումների վերաբերյալ առանցքային եզրակացություններ, քաղաքականությունների վերլուծություն և առաջարկություններ, ինչպես նաև տեղեկատվություն արդեն իսկ կատարված գործողությունների վերաբերյալ:

Հաշվետվությունը պետք է շրջանառվի ՄՀՀ անդամների և շահագրգիռ կողմերի շրջանում և ներկայացվի ՄՀՀ հանդիպումների ընթացքում: ՀԻԳ համակարգողը պատասխանատու է ՄՀՀ հանդիպումների ընթացքում ՄՀՀ-ին առաջարկություններ և եզրակացությունների ներկայացման համար:

Պայմանագրի կատարման ժամկետը և ակնկալվող տևողությունը 1 տարի է:

**III. Գործառույթներ**

ՀԻԳ ԱԽ-ի հետ համատեղ՝ ՀԻԳ խորհրդատուի գործառույթներն են.

1. Սահմանել վերլուծության և գնահատման համար կարևոր թեմաներ՝ կազմելով աշխատանքային պլան,
2. Գնահատել խարանի և խտրականության իրավիճակները և դրանց ազդեցությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Տուբերկուլոզի ծրագրերի իրականացման վրա և տալ առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ,
3. Կազմակերպել բնակչության հիմնական խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող անձանց և ՏԲ պացիենտների, մարդու իրավունքների խախտումների և նրանց խնդիրների կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծառայությունների հասանելիության հետ կապված հարցերին առընչվող տեղեկատվության հավաքագրում և դիտարկում,
4. Առանձնացնել և արձագանքել խտրականության, մարդու իրավունքների խախտման, գենդերային անհավասարության և այլ դեպքերի մասին տեղեկատվությանը հանրային քարոզարշավների, պետական մարմիններին պաշտոնական հարցումներ ուղարկելու միջոցով և այլն,
5. ՄՀՀ-ի միջոցով տեղեկացնել շահագրգիռ կողմերին (պետական մարմիններ, ՄԱԿ, միջազգային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ և այլն) կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծառայությունների ոլորտում մարդու իրավունքների և խտրականության իրավիճակների և անհրաժեշտ միջոցառումների մասին,
6. ՄՀՀ-ին ներկայացնել պարբերական հաշվետվություններ և առաջարկություններ (առնվազն կիսամյակային՝ համաձայն ՄՀՀ օրակարգի),
7. Հանդես գալ որպես կապող օղակ ՄՀՀ-ի և ՀԻԳ ԱԽ-ի, հասարակական կազմակերպությունների, խոցելի խմբերի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՏԲ հիվանդների համայնքների համար,
8. Ստեղծել հնարավորություններ հասարակական կազմակերպությունների և համայնքների համար ընդգրկվելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ և ՏԲ ծրագրերի նախագծման և իրականացման, ինչպես նաև Պետական անցումային ծրագրի և Գլոբալ հիմնադրամին ներկայացվելիք հայեցակարգերի մշակման, իրականացման և մշտադիտարկման գործում,
9. Աջակցել ՄՀՀ-ի գործողություններին:

#### **IV. Որակավորումներ, փորձ և հմտություններ**

##### *Որակավորումներ և փորձ*

- Սագիստրոսի կոչում սոցիալական գիտությունների, հանրային առողջության, ժողովրդագրության ոլորտում: Ավելի բարձր գիտական աստիճանը նախընտրելի է:
- Նախագծերի/ծրագրերի մոնիտորինգի և գնահատման առնվազն 3 տարվա փորձ,
- Գլոբալ Հիմնադրամի ՄՀՀ քաղաքականության և հասարակության կազմակերպությունների, խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՏԲ հիվանդների հետ աշխատանքային փորձ,
- Երկրի առողջապահական համակարգի կառուցվածքներին ծանոթություն,
- ՄԻԱՎ-ի, ՏԲ-ի և մալարիայի համաճարակային ցուցանիշներին ծանոթություն,
- ՄԻԱՎ-ի, ՏԲ-ի, մալարիայի, ինչպես նաև մարդու իրավունքները կարգավորող օրենսդրական դաշտին ծանոթություն,
- Բազմակողմանի կառավարման միջավայրում աշխատելու փորձ:

##### *Հմտություններ*

- Տարբեր աղբյուրներից տեղեկատվության վերլուծության հմտություն
- Քաղաքական որոշումներ կայացնելու, ռազմավարական վերլուծություն և զեկուցում

- Microsoft Office-ի, մասնավորապես Microsoft Excel and Microsoft Project ծրագրերի վարժ տիրապետում
- Հասարակական կազմակերպությունների և կազմակերպչական շահագրգիռ կողմերի հետ աշխատելու ունակություն
- Արդյունավետ միջանձնային հմտություններ և հասարակական կազմակերպությունների հետ արդյունավետ հաղորդակցվելու և շփվելու փորձառնություն
- Ներկայացման, աջակցության, հաղորդակցման և գրելու վարժ հմտություններ
- Թիմում աշխատելու ունակություն